ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի ---------------------------- թիվ ------------------որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003 թվականի-------------------- թիվ --------------------------- հրամանով

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝

------------------------ Տ. Սարգսյան
----- ----------------- 2003 թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարար՝

------------------------ Վ. Խաչատրյան
----- ----------------- 2003 թ.

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ

1. Սույն կարգը սահմանվում է «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետի և 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների (այսուհետև՝ բանկ) կրեդիտորական պարտքերի (այսուհետև՝ կրեդիտորական պարտք) անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը:

2. Սույն կարգի իմաստով՝ կրեդիտորական պարտք են համարվում ցանկացած քաղաքացիա-իրավական գործարքից (բացառությամբ՝ բանկային ավանդների, բանկային հաշիվների, փոխառությունների ներգրավման) ծագած և բանկի կողմից պարտատիրոջը վճարման ենթակա պարտավորության գումարը կամ այլ աշխատանքների և ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած պարտավորությունը, ինչպես նաև հաշվարկված բայց չպահանջված ու չվճարված աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, անձի նկատմամբ բանկի ունեցած առհաշիվ պարտքերը:

3. Կրեդիտորական պարտքը համարվում է անհուսալի՝

ա) եթե պարտատիրոջ կողմից ազատվել է պարտավորության (կամ դրա մի մասի) կատարումից,

բ) դատական ակտով համարվել է վերադարձման ոչ ենթակա:

4. Սույն կարգի համաձայն անհուսալի ճանաչված կրեդիտորական պարտքը բանկի կողմից ներառվում է եկամուտների կազմում՝ ուղղվելով եկամուտների համապատասխան հաշվին անհուսալի ճանաչման բանկային օրվա ընթացքում:

5. Բանկը, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի, մինչև կրեդիտորական պարտքի անհուսալի ճանաչման օրը կարող է կրեդիտորական պարտքը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ: Սույն կետով նախատեսված դեպքերում սույն կարգով սահմանված դուրսգրման պարտականությունը չի գործում:

6. Սույն կարգը սահմանված է շահութահարկի հաշվառման կարգավորման նպատակով և դատարանի, պետական կառավարման մարմինների, բանկի կամ նրա հաճախորդների կամ վերջիններիս բաժնետիրոջ, կամ որևէ այլ անձի կողմից սույն կարգի որևէ դրույթ կամ հասկացություն չի կարող մեկնաբանվել, վկայակոչվել կամ կիրառվել որպես բանկի և պարտատիրոջ միջև իրավահարաբերությունները կարգավորող կամ այդ հարաբերությունները սահմանափակող նորմ՝ պայմանագրի կնքման, կատարման, պարտավորության կատարման ժամկետի երկարաձգման, տոկոսների, տուժանքների հաշվարկման, պարտավորության դադարման և ցանկացած այլ հարցի վերաբերյալ: